ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<10>> հոկտեմբերի 2024թ. N ՄՈ/477 -Ա

ք. Արմավիր

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 9-րդ, 18-րդ, 27-րդ և 31-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի 2024 հոկտեմբերի 9-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին տրամադրել 2022-2023 թվականների աշխատանքային տարվա տեղափոխված արձակուրդի չօգտագործած մասը և 2023-2024 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի մասը՝ 2024 թվականի հոկտեմբերի 14-ից 28-ը ներառյալ՝ 11 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ՝ Դավիթ Դավթյանին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին:
4. Արամ Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի հոկտեմբերի 29-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-10-10 13:23 GMT+4
Հավաստված է eID քարտի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**